

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Ուրբաթ, 21 Դեկտեմբերի, 2007

Շաբաթ, Դեկտեմբերի 15-ի երեկոյեան ժամը 6-ին, աւելի քան 1500 հրաւիրեալների ու հանդիսականների ներկայութեամբ, Գլէնդէլ միջնակարգ դպրոցի հանդիսասարահում նշուեց Յ.Յ.Դ. օրուայ տօնակատարութիւնը՝ Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կազմակերպութեամբ: Գլխաւոր բանախօսն էր Յայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եւ ՀՀ նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը: Հրաւիրեալ հիւրերի թւում էին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Սուշեղ արք. Մարտիրոսեանը, Յայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանը, յարանուանութիւնների ներկայացուցիչներ, ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը, Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանը, Գլէնդէլի քաղաքապետ Արա Նաճարեանը, ազգային կուսակցութիւնների, հասարակական, մշակութային, հայրենակցական միութիւնների ու կազմակերպութիւնների եւ մամուլի ու հայկական հեռուստակայանների ներկայացուցիչները: Հանդիսութեան ընթացքի մասնակցութեամբ Գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, որով ներկայացուեց Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի հաստատական երիտասարդների պայքարի քայլարշաւը մինչեւ Սաքրամենթօ, բողոքի ու ցասումի հնչեղութիւնը թուրքական ուրացման դէմ եւ «յեղափոխութիւնը ընթացքի մէջ է» նշանաբանով Յ.Յ.Դ.ի երթը՝ հայ ժողովրդի արդար իրաւունքների վերահաստատման ի խնդիր: Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի անդամ Նազօ Աբանեանը փոխանցեց Կենտրոնական Կոմիտէի խօսքը: Ելոյթ ունենալով միջոցառմանը, Վահան Յովհաննիսեանն ասաց. «Մէկ-մէկ մեզ ասում են, սիրելի բարեկամներ, ինչպէ՞ս կարող է դաշնակցական նախագահը ղեկավարել մի երկիր, որտեղ խորհրդարանական մեծամասնութիւնը այլ կուսակցութիւնից է եւ հէնց այդ կուսակցութիւնն էլ ձեւաւորում է, ըստ սահմանադրութեան՝ կառավարութիւն: Ինչպէ՞ս դաշնակցական նախագահը կը կարողանայ ղեկավարել երկիրը: Այս հարցը տալիս են մարդիկ, որոնք չեն հասկացել, թէ նախագահի իրական գործունէութիւնը ինչու՞ն է կայանում: Մարդիկ կան, որ իրենց թւում է, որ նախագահական պալատում պէտք է վճռուեն բոլոր մեծ ու մանր հարցերը: Իբր նախագահը գալու է եւ պէտք է սկսի նոր նախարարներ նշանակել, նախարարական նոր պաշտօններ բաժանել եւ այլն: Դա չի նախագահի անելիքը: Նախագահը պէտք է ուղղակի մէկ ընդ միշտ ապահովի սահմանադրական կարգը: Այսինքն, կանչի բոլոր նրանց, ովքեր որ խարդախութեամբ ապահովում են ընտրութիւնների ցանկալի արդիւնքը եւ նրանց ասի. «Տղաներ, ոչ ոք այլեւս ձեր օգնութեան կարիքը չունի: Գնացէ՛ք տուն: Այլեւս ընտրութիւններում որոշիչը լինելու է ժողովուրդ ձայնը, միայն», յայտարարեց Յայաստանի Հանրապետութեան նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը՝ Յ.Յ.Դ. օրուայ տօնակատարութեանը ունեցած ելոյթում, որը ներկայացուեց հարցազրոյցի ձեւով: «Նախագահը պատասխանատու է սահմանադրական կարգի պահպանման համար, որը կատարում է մասամբ կառավարական հաստատութիւնների, միւս մասամբ դատական իշխանութեան ճանապարհով՝ Սահմանական դատարանի, դատարանների եւ այլն: Նախագահը պէտք է խստագոյնս պատժի բոլոր նրանց, ովքեր համարձակում են զանգահարել իրենց բարձր պաշտօնական աթոռից որեւէ դատաւորի եւ ազդել այդ դատաւորի որոշման վրայ: Սա է սահմանադրական կարգի ապահովումը»: Իսկ, թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը որոշեց սեփական թեկնածուով մասնակցել 2008 թուականի նախագահական ընտրութիւններին, նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանը ծանրանալով այն իրողութեան վրայ, որ այսօր կուսակցութիւնը ձեռք է բերել պետական կառավարման փորձ եւ դաշնակցական թեկնածուները անցել են քաղաքական ու վարչարարական ղեկավարման դպրոց, ընդ որում, դաշնակցական թեկնածուները գալիս են իշխանութեան ներսից, ուստի, եզրակացրեց նա, Դաշնակցութիւնն այսօր կարող է երաշխաւորուած փոփոխութիւններ կատարել երկրում, բայց կայունութեան պայմաններում: Իսկ անդրադառնալով Արցախի հիմնահարցին, Վահան Յովհաննիսեանը միանշանակ շեշտեց, որ «Արցախի հարցում մեր ձեռք բերած դիրքերից, մեր ձեռք բերած դիրքորոշումներից, նուաճումներից նահանջ չպէտք է արձանագրի Յայաստանի Հանրապետութեան նախագահը, որ կուսակցութիւնից էլ, որ լինի: Դա մեզ համար շատ յստակ

է: Եւ ինձ օրինակ յաճախ հարցնում եմ՝ տարածքներ վերադարձնելու կողմ կը լինե՞ք, թէ ոչ, եթէ նախագահ լինե՞ք,- պատասխանը շատ յստակ է: Հայաստանի Հանրապետութեան նախագահը ի՞նչ զիջումների մասին պիտի խօսի, եթէ ոչ մի անգամ չենք լսել, թէ Ադրբեջանի կողմից զիջումը ո՞րը պիտի լինի: Ադրբեջանը դեռ մինչեւ հիմա ոչ մի անգամ չի ասել, որ վերջապէս ինքը ի՞նչ է զիջելու: Ինչի՞ պիտի Հայաստանի Հանրապետութեան նախագահը խօսի ինչ-որ տարածքներ զիջելու մասին: Բայց ի վերջոյ խաղաղութիւնը եւ խաղաղութեան հաստատումը մեր տարածաշրջանում մեզ համար կենսական նշանակութիւն ունի: Ուրեմն, մենք չպէտք է կարծի կեցուածք ընդունենք, երկու ոտքը մի կօշիկի մէջ դնելով, ընդհանրապէս չնկատենք, որ հարեւաններ ունենք: Այդպէս էլ չես կարող անել: Ուրեմն, դու պէտք է պատրաստ լինես որոշակի զիջումների, բայց միայն այն պարագայում, եթէ դրանք փոխզիջումներ են: Իսկ խօսելով հայ-թուրքական յարաբերութիւնների մասին, Վահան Յովհաննիսեանը յայտարարեց. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, այն միակ քաղաքական ուժն է Հայաստանում, որը թուրքերի հետ ակնհայտ լեզու կը գտնի, քան մնացած բոլոր ուժերը, որովհետեւ իրենք մեզ գիտեն, մենք էլ՝ իրենց: Նրանք մեզ լաւ են ուսումնասիրել, մենք էլ՝ իրենց. եւ չեն կարծում մեր մէջ որեւէ քննարկում, որեւէ բանակցութիւն բոլորովին անպտուղ կը լինի: Մենք պէտք է հասկանանք, որ այսօր կռուի, ակնհայտ աղմուկի, թշնամանքի հարց չենք լուծում: Մենք ուղղակի պէտք է փորձենք նրանց հասկացնել, թէ ինչու է կայանում մեր պահանջը եւ մեր պահանջի բաւարարման ճանապարհին, իրենք ինչ շահ կ'ունենան: Ես կարծում եմ, որ դա իսկապէս Դաշնակցութիւնը կարող է անել», յայտարարեց Վահան Յովհաննիսեանը:

Հ.Յ.Դ. օրուայ տօնակատարութիւնը ճոխացուեց գեղարուեստական յայտագրով, ուր նախ ելոյթ ունեցաւ երեւանեան քաղաքային ռոմանսի մեկնաբաններից Արմէն Սովսիսեանը: Խմբական երկու պարերով հանդէս եկան Հովիվուտի «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս» ազգ. երկրորդական վարժարանի աշակերտուհիները, իսկ ձեռնարկի աւարտին ազգային, յեղափոխական երգերով ելոյթներ ունեցան Անահիտ Խաչիկեանը եւ Ներսիկ Իսաիրեանը: Տօնակատարութիւնը փակուեց երեկոյեան ժամը 9ին:



Ուրբաթ, Դեկտեմբերի 14-ի երեկոյեան ժամը 7-ին, Փասադենայի Հայ կենտրոնում կազմակերպուած երդման արարողութեան ընթացքում 18 նորագիրներ միացան Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի կազմակերպութեան շարքերին: Նագիրները Դաշնակցութեան դրօշի եւ ծրագրի առջեւ կատարեցին իրենց երդումը՝ ծառայելու Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին: Շնորհաւորական խօսքով ելոյթ ունեցաւ Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանը, որը բարի գալուստ մաղթելով նորագիրներին, անդրադարձաւ ազատ, անկախ, միացեալ, ժողովրդավար ու ընկերային արդար կարգավիճակով Հայաստան կերտելու Դաշնակցութեան գերագոյն նպատակին եւ դիտել տուեց, որ Հայաստանում, Արցախում, Զաւախքում եւ աշխարհի ցանկացած վայրում ծառայող դաշնակցականների գործունէութիւնը նոյնանում է այդ նպատակի իրագործման գաղափարախօսութեամբ: Միջոցառման աւարտին, իր շնորհաւորական խօսքում, ՀՀԴ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը նորագիր ընկերներին յիշեցրեց դաշնակցական շարքերի առանցքը հանդիսացող կարգապահութիւնը եւ ընդհանուր ժողովներով որոշումներ կայացնելու եւ գործադրելու կարեւորութիւնը: Երդման արարողութեանը հետեւեց Հ.Յ.Դ. օրուայ խրախճանքը, որի անակնկալը հանդիսացաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի փոխնախագահ, Հայաստանի նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանի ներկայութիւնը սոյն խրախճանքին:



Գլէնդէլի Հայ մշակութային հիմնարկութեան նախաձեռնութեամբ Կիրակի, Դեկտեմբեր 16-ին տեղի ունեցաւ Գլէնդէլի Երիտասարդական կենտրոնի շինարարութեան մեկնարկի արարողութիւնը կենտրոնի հողաշերտի վրայ, որ գտնուում է Գլէնդէլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից, Չեսնաթ փողոցի վրայ: Արարողութեանը ներկայ էին Արեւմտեան թեմի առաջնորդ Սուշեղ արք. Մարտիրոսեան, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ եւ ՀՀ նախագահութեան թեկնածու Վահան Յովհաննիսեանը, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը, Հ.Յ.Դ. Ամերիկայի Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամները, նահանգային ու քաղաքային բարձրաստիճան պաշտօնատարներ եւ ակնհայտ քան հինգ հարիւր

հայորդիներ: Իր ողջօյնի եւ շնորհաւորական խօսքում Վահան Յովհաննիսեանը ուրախութիւն յայտնեց միջօցառմանը ներկայ գտնուելու համար: «Ես կարծում եմ այս կենտրոնը իսկապէս կը դառնայ հաւաքատեղի մեր երիտասարդութեան համար: Ի՞նչ ենք սպասում այս հայահոծ գաղութի երիտասարդութիւնից: Լինել լաւ քաղաքացիներ, հաւատարիմ քաղաքացիներ Ամերիկայի Միացեալ Նահանգներին եւ լինել օգտակար ու հաւատարիմ պատմական հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետութեանը, Լեռնային Ղարաբաղին եւ ողջ հայութեանը»,- նշեց Վահան Յովհաննիսեանը: Միջօցառմանը շնորհաւորական խօսքով ելոյթ ունեցաւ նաեւ Գլենդէլի քաղաքապետ Արա Նաճարեանը: Աւարտին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Կենտրոնական վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի Դեկտեմբերի 16-ի երեկոյեան ժամը 5-ին, Էնսինոյի «Ֆերահեան» ազգ. վարժարանի սրահում կայացաւ հանդիպում Հայաստանի Ազգային Ժողովի փոխնախագահ եւ նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանի հետ, որի ընթացքում Վահան Յովհաննիսեանը ներկայացրեց Հայաստանի ներկայիս իրավիճակը եւ պատասխանեց երիտասարդների բազմաթիւ հարցերին: Իր խօսքում, Վահան Յովհաննիսեանը շեշտեց երիտասարդութեան հետ հանդիպումների կարեւորութիւնը, ընդգծելով, որ նրանք են ազգի ապագան են:



Կիրակի, Դեկտեմբերի 9-ի երեկոյեան ժամը 5-ին, Փասադենայի Ս. Սարգիս եկեղեցւոյ «Անտոնեան» սրահում «Համազգային» հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան «Շահան Շահնուր» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գրական յատուկ երեկոյ՝ նուիրուած Համաստեղի գրական ժառանգութեանը: Միջօցառմանը ելոյթ ունեցաւ Սարգիս Մահսերէճեանը, անդրադառնալով Համաստեղի կեանքին ու գրական գործունէութեանը: Միջօցառմանը ընթերցուեց նաեւ հատուածներ Համաստեղի «Քրիստոսի երկրորդ գալուստը» եւ «Այծետոմար» գրքերից:



Գլենդէլում գործող Միացեալ հայկական ֆոնդը Դեկտեմբեր 15-ին իր նպաստամատոյց 145-րդ թռիչքով Երեւան առաքեց աւելի քան 6 միլիոն դոլարի արժողութեան մարդասիրական օգնութիւն: Միացեալ հայկական ֆոնդը 145 թռիչքներով եւ 1518 ծովային արկղերով մինչեւ այժմ 512 միլիոն տոլարի արժողութեամբ մարդասիրական նպաստ է ուղարկել Հայաստան:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: